ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2020 թվականի թիվ 175 - Ա

ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունիսի 4-ի թիվ ՍՊ/14.1/14860-2020 հանձնարարականը՝

ո ր ո շ ու մ եմ.

Հաստատել համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում ՀՀ Տավուշի մարզի համայնքներում միջոցառումների կազմակերպման և իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը համաձայն հավելվածի:

Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

X

2020թ.հունիսի 15

ք.Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի 2020 թվականի

հունիսի 14-ի թիվ 175-Ա որոշման

ԿԱՐԳ

Համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում ՀՀ Տավուշի մարզի համայնքներում միջոցառումների կազմակերպման և իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնելու

1. Համայնքի ղեկավարը համայնքներում միջոցառումների իրականացման ժամանակ Կորոնավիրուսի համավարակի դեմ պայքարին ուղղված ՀՀ կառավարության, ՀՀ Պարետի որոշումներով և ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրվող համընդհանուր ու ոլորտային անվտանգության կանոններով և ցուցումներով սահմանված պահանջների ապահովման նպատակով՝

- առավելագույնս միջոցներ է ձեռնարկում ոչ պարտադիր միջոցառումների չիրականացման համար,
- կազմակերպվելիք միջոցառումների մասին /կնունք, ծնունդ, հուղարկավորություն և այլն/ տեղեկանում է նախապես և հայտնում նաև ՀՀ Տավուշի մարզպետարանի Տեղական ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչությանը,
- միջոցառումների հաշվառման համար համայնքապետարաններում բացվում են գրանցամատյաններ, որտեղ գրանցվում են իրականացվելիք (իրականացվող) միջոցառումների մասին տվյալներ՝ անցկացման ժամանակի, վայրի, մասնակիցների քանակի, իր կողմից տեղեկացված լինելու ամսաթվի, ինչպես նաև միջոցառման ավարտից հետո նշումներ՝ խախտումների կամ դրանց բացկայության վերաբերյալ,
- սահմանված կարգով հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկացնում են ոստիկանությանը կամ ըստ անհրաժեշտության նաև այլ մարմինների:

2. ՀՀ Տավուշի մարզպետարանի Տեղական ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչությունը՝

- վերահսկողություն է իրականացնում 1-ին կետոով սահմանված կանոնների պահպանման ուղղությամբ,
- պահում է միջոցառումների գրանցամատյան՝ համայնքներից ստացված տեղեկատվության հիման վրա,
- համայնքներին տեղեկացնում է չգրանցված միջոցառումների վերաբերյալ ստացված տեղեկատվության վերաբերյալ,
- համակարգում է համայնքների և այլ մարմինների միջև փոխգործակցությունը,

- շաբաթական հաշվետվություն է ներկայացնում իրականացված միջոցառումների և արձանագրված խնդիրների վերաբերյալ:

ՀՀ Տավուշի մարզպետարանի

գլխավոր քարտուղար՝ Ա.Գևորգյան

X _____